- **«Ստեղծել պայմաններ Հավատարմագրման եվրոպական համագործակցության կողմից Հայաստանի հավատարմագրման համակարգի ճանաչման համար» Թվինինգ ծրագրի տեղեկագիր (AM 17 ENI EC 01 19)**

- **Ծրագրի նպատակը**

Թվինինգ ծրագրի ընդհանուր նպատակն է աջակցել ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ/CEPA) իրականացմանը՝ նպաստելով Հայաստանում հավատարմագրման և համապատասխանության գնահատման միջազգայնորեն ճանաչված համակարգի զարգացմանը:

Ծրագիրը մասնավորապես միտված է օգնել «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին (ARMNAB) լիարժեք մասնակցություն ցուցաբերել Հավատարմագրման եվրոպական համագործակցությանը (ՀԵՀ/EA) -ին՝ համապատասխանելով ՀԵՀ ասոցացված անդամակցության պայմաններին:

ARMNAB-ը որպես ՀԵՀ ասոցացված անդամ դեռևս չի դիմել ՀԵՀ՝ գործընկերային գնահատում իրականացնելու խնդրանքով. սույն ծրագիրը կաջակցի ARMNAB-ին ՀԵՀ երկկողմ համաձայնագրի ստորագրող կողմ դառնալու նախապատրաստական աշխատանքում, որպեսզի ARMNAB-ը համապատասխանի առաջադրված պայմաններին:

Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից: Ծրագրի իրականացման բյուջեն 700 000 եվրո է:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. իրավական և ընթացակարգային շրջանակների խմբագրում՝ համաձայն 765/2008/EC տեխնիկական կանոնակարգի ու ԻՍՕ/ԻԷԿ 17011-ի:
2. ARMNAB-ի ինստիտուցիոնալ կարողությունների ընդլայնում, որն անհրաժեշտ է ՀԵՀ կանոններին համապատասխան հավատարմագրում տրամադրելու համար

- **Բաղադրիչ 1-ի շրջանակում անցկացված դասընթաց**

Թվինինգ ծրագրի շրջանակում սեպտեմբերի 16-ին և 17-ին Բաղադրիչ 1-ի ղեկավար Մարկո Չերին ARMNAB-ի ներքին և արտաքին գնահատողների համար անցկացրեց «ԻՍՕ/ԻԵԿ 17011:2017. Համապատասխանության գնահատում – Համապատասխանության գնահատման մարմիններին հավատարմագրող հավատարմագրման մարմիններին ներկայացվող պահանջներ» դասընթացը:

- **Կառավարման կոմիտեի առաջին նիստ**

Սեպտեմբերի 23-ին տեղի ունեցավ «Ստեղծել պայմաններ Հավատարմագրման եվրոպական համագործակցության կողմից Հայաստանի հավատարմագրման համակարգի ճանաչման համար» Թվինինգ ծրագրի կառավարման կոմիտեի առաջին նիստը: Նիստի ընթացքում հաստատվեցին առաջիկա 6 ամիսների աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև ծրագրի տեսանելիությանն ու ֆինանսավորմանն առնչվող մի շարք հարցեր: Քննարկվեցին նաև Թվինինգ ծրագրի մեկնարկային հանդիպման մանրամասները, ինչպես նաև ԵՄ-ի և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների կողմից ստորագրվելիք փաստաթուղթը:

- **Մեկնարկային հանդիպում**

Բացման խոսքում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսը նշեց. «Կարծում ենք՝ որակի ենթակառուցվածքի ամրապնդումը համալիր և ժամանակատար գործընթաց է. այն արտահանման ոլորտի մրցունակությունն

ապահովելու գործում առանցքային տարրերից մեկն է:»:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը նշեց, որ էկոնոմիկայի նախարարությունը համոզված է, որ այս ծրագիրը կծառայի ի շահ Հայաստանի տնտեսության:

Ծրագրի ղեկավար Թոմաս Ֆակլամը (Գերմանիայի հավատարմագրման մարմին - DAkkS) ընդգծեց. «Այս մեկնարկային հանդիպումը Գերմանիայի, Իտալիայի և Հայաստանի հավատարմագրման մարմինների միջև սերտ համագործակցության սկզբնակետը կլինի: Մենք հավասարության սկզբունքով ենք աշխատելու միասին և սովորելու ենք միմյանցից»:

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրեն Անի Օբոսյանն ընդգծեց ծրագրի կարևորությունը դրանում ներգրավված կողմերի միջև հարաբերությունների ամրապնդման տեսանկյունից՝ հավելելով, որ հավատացած է, որ այս ծրագիրը հնարավորություն կընձեռի բարձրացնել կառույցի տեսանելիությունը Եվրոպայում:

Իրենց ելույթներում DAkkS-ի գործադիր տնօրեն Դոկտոր Ստեփան Ֆինկեն և Իտալիայի հավատարմագրման մարմնի՝ ACCREDIA-ի գլխավոր տնօրեն Ֆիլիպո Տրիֆիլետին խոսեցին հավատարմագրման առավելությունների և միջազգային ճանաչման ուղու մասին:

Թվինինգ ծրագիրը և դրա գլխավոր նպատակը ներկայացվեցին Թվինինգի ռեզիդենտ խորհրդատու (ԹՌԽ) Միկլոշ Դևեչի և նրա գործընկեր, ARMNAB-ի կառավարման համակարգի մենեջեր Նազիկ Աբգարյանի կողմից:

Ստեղծել պայմաններ Հավատարմագրման եվրոպական համագործակցության կողմից Հայաստանի հավատարմագրման համակարգի ճանաչման համար

ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳՐԻ ԹԻՄ

Անդամ պետության ծրագրի ղեկավար
Թոմաս Ֆակլամ
Միջազգային հարաբերությունների գծով ավագ խորհրդատու
DAkkS - Գերմանիա
thomas.facklam@dakks.de

Շահառու երկրի ծրագրի ղեկավար
Անի Օբոսյան
Տնօրեն
Հայաստանի «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ
aobosyan@armnab.am

Թվինինգի ռեզիդենտ խորհրդատու - ԹՌԽ
Միկլոշ Դևեչ
Տեխնիկական փորձագետ
ACCREDIA - Իտալիա
demiklos@tolna.net
+374 98 40 33 45

ԹՌԽ-ի գործընկեր
Նազիկ Աբգարյան
Կառավարման համակարգի մենեջեր
Հայաստանի «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ
nazik-abgaryan@mail.ru

ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳՐԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Թվինինգ ծրագիր	**Հայաստանում ԵՄ պատվիրակություն**
Լուսինե Ժամհարյան ԹՌԽ-ի օգնական luszhamharyan@gmail.com +374 77 85 33 30 **ARMNAB** Հայաստանի Հավատարմագրման ազգային մարմին armnab@armnab.am +374 11 20 33 82 Մ. Մկրտչյան 5 375010 Երևան Հայաստան www.armnab.am (F) @Հավատարմագրման ազգային մարմին **Ջանա Կլինկ** Ծրագրի մենեջեր jana.klink@dakks.de DAkkS Սպիտելմարկտ 10 10117 Բեռլին Գերմանիա	Համագործակցության բաժին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն Ֆրիկի 21 0002 Երևան Հայաստան eeas.europa.eu/delegations/armenia_en **Ծրագրի ֆեյսբուքյան էջ** https://www.facebook.com/Setting-conditions-for-recognition-of-the-Armenian-Accreditation-System-238928521364661/?ref=pages_you_manage EU_Armenia eudelegationtoarmenia EUDelArmenia #EU4Armenia